

Էջից պիտի բաղկացած լինիւ Այս տեսակի մի մեծ աշխատութիւն ամենի համար ձեռնատու, մատչելի և ինչքան կարելի է արժան դարձնելու համար ոչ մի ջանք չի խնայուի։ Օտար երկրների համար գինը 18 շիլին է լինելու ճանապարհածախսով։

Ռւսանող Մ. Ի.

Եգինըուբդ (Սկզբան)

14-ն Մարտի 1910 (Ն. 8.)

## Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

### Բ Ա Գ Ա Դ Ա Գ Ի Խ Ա Բ Ե Ր Ո Ւ Մ Ը

Ա. Զ. Դ.

1905 ու 1906 թուականների Հայ-Թթվական ընդհարումները յանկաքակի ծնունդ չեն, այլ հասարակային կազմակութեան և բազաքական կեանքի արտայայտութիւններ։ Դրանց լուսաբանները տպագայ պատմաբանի գործն է որ ներկայ սերնդից կպահանջի կարելոյն չափ շատ պատմական նիւթերի մատակարարումն Այժմ, երբ այդ չափաբառը ընդհարումները վերջացել են և մոքերը հանդարտել՝ մեզ, ականատեսներին և ժամանակակիցներին վերայ պարտք կայ անկողմնապահութեամբ ամփոփել և գառաւորել նիւթերը ապագայ պատմաց պատմչի գործը գիւրացնելու համար։

Զեռնարկելով մի շարք ընդհարումների ժողովածու՝ աշխատութեանս հեղինակը աչքի առաջ է ունեցել վերոյիշեալ նպատակը։

Ներկայումս տալով Բագայի աւերման պատմութիւնը, հեղինակը հարկ է համարում ժանուցանել, որ նա իւր նիւթերը ժողովի է 1906 ու 1907-ին անմիջապէս այն՝ ոչ սակաւաթիւ արժանահաւատ անձինքներից, որոնք ենթարկուել են ազգէտին ու ականատես են եղած։

Նիւթերը արձանագրուած են համեմատական վերտառութեամբ և կարելոյն չափ անկողմնապահութեամբ։

1909 թ. Յուլիս. Բագու+

Հեղինակ

## Ո.

Բագայ գիւղի դիրքը. Բագի ձորը. Խօսկան բարը. Բինաները. Գիւղական հաճապարհները. Սկեղեցին. Թողովրդի կարողութիւնը. Գիւղատեսիսնուրեան հիւղեր. Արհեստներ, Լուսաւորութիւն.

Դանձակ քաղաքից գէպի արևմուտք, Դանձակի գաւառում, աշխարհագրական 16° 26' հիւսիսային լայնութեան և 41° 13' 30'' արևելեան երկայնութեան կէտում գրուած է Բագայ գիւղը մի լայնանիստ, չափաւոր քարձութեան հարթավայրի վերայ, ոչ կոչւում է «Ազգաբակ»: Գիւղի արևմտեան կողմում՝ ձորի մէջ հոսում է գէպի հիւսիս, գէպի Կուր գետի աւտղանը Բագայ փոքրիկ գետակը, որ ապա ընդունում է Զագեամի:

Երկրի փշոտ մակերեսոյթը աստիճանաբար սարալանջի փոխուելով՝ եջնում է գիւղից գէպի գետակը՝ նախ կազմելով մի խոր ձոր Խազունով, յետոյ՝ գետակի աջափնեայ լայնատարած գաշտի երկարութեամբ տարածւում են գիւղապատկան խաղողի և թթենիների քաղմաթիւ այգիները, իսկ գետի վրայ տառնումէկ շարեշար ջրադաշներ:

Գետակի ձախ ափում՝ Գեքջա (ցեց) որածայր քարձը քլուրի ստորոտում զետեղուած է Նախակին, հին դարերի Բագայ գիւղը, ուր մշտապէս ընակւում են բադացի մի քանի գերգաստաններ՝ իրեւ շերամապահներ և անասնապահներ և այդ պատճառով հին գիւղն աւելի նման է Բինայի:

Բագայ գետակի ձորը երկու կողմից էլ ժայռոտ է, դժուարամատչելի, շատ տեղ անյարմար անցուգարձի ու անտառածածկի: Մի տեղ գետակի հոսանքը անհամար ժամանակների ընթացքում քերել, տաշել մաշել է մի ահագին ժայռ, կազմելով այդ տեղ մի ջրվէժ: Կիսուած խորացած ժայռի ուղղահայեաց պատերն անգրադարձնում են մարդու ձայնը և այդ պատճառով տեղական ժողովուրդը մկանել է նրա անունը Խօսկան քարը: Նա այդիներից գերեւ է:

Անասնապահնութեան համար յարմարին տեղերը Բագայում, նոյնպէս և այլ գիւղերում, կոչւում են Բինայ: Իւր շրջակայրում Բագայ գիւղն ունի մի քանի այդպիսի բինաներ իրանց գոմերով, տներով, և անասնապահնութեան համար կարեոր յարմարութիւններով: Այսպէս օրինակ Խօսկան քարի մօտ, Սուրբ Մինասի մատուռից, ըստ Բագացւոց մատուռ, ոչ հեռու կան Կապի գոմեր: Մի այլ կողմից վերայ գրուած է

Քեամանդարը բինան, որ միանում է Բագայ գիւղի հետ  
Դոխուղ դօլամա (Խննը կեռման) կոչուած ճանապարհով  
Դիգջա ըլուրի լանջով: Ապա գալիս է Դ. Ա. Պ. Դ. ալայ (ազջ-  
կայ ըերգ) հինան: Առ մի փոքր բերդ է քարաժայռի գագաթին,  
աղիւուկ պատերով, աւելիակ քարաշէն տներով, քայլայուած  
ջրամբորով, որ իւր ջուրը կաւէ խողովակներով ստանալիս է  
Եղել Յամաք ձոր անուն տեղից Անձդ որ ի քօլ գեղեց-  
կոտեսիլ անտառի մօտ Քեամասար բինայի մերձաւոր սահմա-  
նում:

Սոյն այս Քեամանդարն ընկած է Բագայ գիւղի արևմտեան  
կողմում և ունի իւր շուրջը լայնանիստ վարելահողեր—վար-  
դապետի հողեր—այժմ պետական, իսկ երբեմն աւանդաբար  
Խորանաշատ մենաստանին պատկանող, որ մի կողմից տարած-  
ւում է մինչև Կալքար արքոնի անտառը, իսկ միւս կողմից  
միանում է ընդարձակ դաշտի հետ, ուր սփռուած են հինա-  
լուրց հանգստարաններ և մատուռներ և սրանց մէջ կանգնած  
է սաղարդալից, հաստարմատ գատաւոր կաղնի ծառ՝ իր ու  
տիւ և տօնախմբութեան տեղի Բագայի բնակիչների համար:

Գիւղից դէպի արեւքը սփռուած են բագեցոնց այգիները,  
պհեղներն (պահէպ—բսստան) ու Ծինաները. այդ տեղից հոսում  
է գիւղի աղբերներից կազմուած մի առուակ Դիեջի ձորով մին-  
չև Զառչի ըինան, 4-5 վերստի վերայ, որ միանում է գիւղի հետ  
իր իցի ճամփուղութեան տեղի Բագայի բնակիչների համար:

Գիւղի հիւսիսային կողմում բացուած լայն գաշտը հեռ-  
ուից երեցնում է Զագեամի շրջակայքը, Բագու—Թիֆլիս երկա-  
թուղու գիծը, կուր գեակ աւաղանը: Գիւղից դէպի երկաթուղի  
Փալան թեօքան գաշտավայրով ձգւում է լայն ճանապարհը,  
որ կոչում է Մօլլա—Մանսուր, երկու կողմից ունենալով  
Մումուլիթ տու բարձր սարը հին գիւղատեղով և հին հան-  
գստարանով, Բաղերի գլուխ սարը, Թաթառութեամբ, թրքա-  
քնակ գիւղը, Գեօգաց քարաժայռը և Գոմերաձոր ըի-  
նաները:

Գիւղի շուրջը, բացի վերոյիշեալ տեղերը, տարածւում են  
նաև ընդարձակ լայնածաւալ վարելահողեր, խոտհարքներ, արօ-  
տատեղեր, որոնք լի ու լի հնարաւութիւն են տալի բագե-  
ցոց պարապել ամենալարուտ անասնապահութեամբ, առանց  
երեկը բարձրանալու ամաբային արօտատեղեր:

Նոր կամ մեծ Բագան Լըգար ակի բարձրութեան վերայ  
կազմուել է մօտ երկու դար առաջ, ըստ որում բնակիչները  
բազմանալով թուով ու բարօրութեամբ՝ չէին կարող գետեղուել

ձորի հին, սահմանափակ գիւղում, ուստի ընականաբար պէտք է աեղափոխուէին այժմեան յարմար տեղը, որ տարածութեամբ, բարձրադիր հարթութեամբ, ազրի ըների տռատութեամբ և այլ տռաւելութիւններով աւելի համապատասխանող է:

Դիւղի մէջ գործածական ազրի ըները սրանք են.

Ա. Եթի ազրի կամ Շահ Հրադի որ շինած է խողովակով ու տաշտով և տալիս է երեք մատաչափ հաստութեան ջաւը: Սրա մի մասը բագեցի հանգուցեալ Արշակ Մերտեանցն իւր ծախքով ատրել կոլսել է գիւղական եկեղեցու մօտ հառարակաց գործածութեան համար. 1894 թուականի Յունուարի 6-ին սոյն ազրի վրայ կազմել է Պօղոս Մերտեանցը հետեւել արձանագրութիւնը:

«Այս ազրի յորդ և մշտաբուղիս,  
որ է քաղցրիկ յոյժ սաւնորակ,  
նուիրում եմ իմ հայ եղբարց  
Բագագիւղիս քըտնավասարակ,  
որ ես Պօղոս Մերտեանցս  
անուամբ Արշակ Մերտեանցի,  
նորա և իմ սեպհականից  
այս յիշատակը կանգնեցի.  
հանգուցելայն ձեր մազթանքում  
ընթերցողացդ յիշել խնդրեմ,  
արժան լինել անանց կեանքում  
նոյնպէս և Զեզ ձեր անցելոց»

18<sup>½</sup> 94 ամիւ»

Ա. ռ. ռ. շանի ազրի, որ բաւականին բարակ է:

Մուսի ազրի կամ Միջի ազրի վայտէ նաւակով հոսում է երեք մատաչափ հաստութեամբ: Սա իւր համեղութեամբ ամենից առաջնակարգն է համարւում:

Ծերատին ազրի վր շինած է նաւակով, բայց ջուրը բարակահս է:

Բնական միւս բերքերից յայտնի են ներկի համար պիտանացու կարմիր կաւ գիւղի հարաւային կողմում. Սպիտակ կաւ նովերայ քոլում շէկ հողերի գլխին, Գիլ (ճարպանման կաւ) որ թուրք ազգաբնակութիւնը գործ է ածում սապնի փոխարէն, Քարահանք շինութեան համար: Ամենագլխաւորը գիւղի հիւսիսային կողմում Բագալտի քարահանքն է, որից ստացւում են պատուական ջրաղացաքարեր: Քարահանքի տեղը կոչւում է Դարաթաջ (սկ թագ):

Անցնենք այժմ գիւղի հասարակաց հարստութեանը և արևական բարօրութեանը:

Մինչև 1883 թիւը գիւղական ժամասացութիւնը կատարւում էր հին փոքրիկ եկեղեցում, որի վոխարէն յիշեալ թուականին հասարակութիւնը յոյն վարպետի ձեռքով, 8000 ռուբլի ծախքով, շինեց նոր, որ շուտավ քանդուեց ու հասարակութիւնն ստիպուած եղաւ վայտէ կարկատանով հինը յարմարեցնել ժամասացութեան: Սակայն սա էլ իսպառ կողոպտուեցներկայ աւելման ժամանակ: Թաթար հրոսակները կոտրատել են խաչկալը, քանդել են քեմը, աւազանը (գանձ գտնելու), տարել են զանգերը, զռները, պատուհանները, անօթեզէնները, վարագոյրը, քշոցները, քուրվառները, մինչև անգամ գրեանքը վերջիններից, իրեւ կարծես աղետալի օրերը յիշեցնելու, մնացել է միայն մի ձեռագիր աւետարան քրքրուած, Յոհաննու աւետարանը, որի յիշատակարանից երեսում է, որ Արարատեան աշխարհի՝ Աղստեռ Նահանգի Տանաղռան գիւղի սաղմոսերգուքահանայ Գասպարը և իւր եղբայր Ելիզարը արտագրել են տուել Յահաննէս քահանայի ձեռով ՌՃԿ (1160—17.1) հայոց թուին, Պարսից Նահանէֆան թագաւորի, Յակոբ կաթողիկոսի և Քջոց քաջ հռետոր Մովսէս արքեպիսկոպոսի օրով: Եւ Գասպար քահանան քարի ցանկութեամբ կատել է, ու նուիրած այս աւետարանը, իրեւ յիշատակ, յաւիտեան մնայ Տանաղռան գիւղի եկեղեցում . . . բայց արժանայիշտատակ քահանան կարող էր արդեօք մտքովն անցկացնել՝ թէ իւր սրբանուէր աւանդը Տանաղռանից կընկնի Բագայ գիւղը և 184 տարի յետոյ պատառ պատառ կլինի թուրք հրոսակների ձեռքով:

Բագայի աւերուած եկեղեցին իւր ծխատէր Մեսրոպ քահանայի միջոցով կարողացաւ ձեռք բերել 1906 թուին Բագւում, նուիրարար, մը քանի կարեւոր անօթեզէն, սպառներ, պատկերներ և զգեստներ: Այսպէս՝ Լիւդովիկոս Սարգսեանը մի արծաթեայ ոսկեզօծ սկիճ, Տիկին Մայիլեանը նուիրեց ուրբ Աստուածածնի մեծադիր պատկեր, Յակոբ Մանգասարեանը՝ խաչկառ, Մկրտիչ Քալանթարեանն ու իւր եղբայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մեծադիր պատկեր, Փիրագեանցը՝ մի բուրգառ, Բագուայ հայոց եկեղեցին՝ երեք հատ շուրջառ, երեք փորսւրար և այլն:

Գիւղի շուրջը սփռուած են հին գիւղատեղեր, գերեզմաններ, հողի տակից գուրս են գալի թոնդերներ, կաւէ ամաններ, զանազան ուղղութեամբ և խորութեամբ տարած աղբիւրի կաւէ խողովակներ, բրուտանոցի և դարբնոցի հետքեր և այլն:

և այլն։ Այս հնութեան հետքերը ցոյց են տալիք, որ գարեր առաջ եղել է այսաեղ ընակութիւն և, ով գիտէ, ի՞նչ արհաւ-  
շիրքների է ենթարկուել զանազան ժամանակներում։

Հին շիրմաքարերի արձանագրութիւններից մինը, որ եղած-  
ների մէջ ամենահինն է երեսում, գրուած է հայոց ՌԵ (1020—  
1571) թուին, կամ 337 տարի մեղնից առաջ։ Այսոս, որ  
արձանագրութիւննը եղծուած է։ Սակայն քարի ճակատին երե-  
սում է հետեւեալ նկարը։ Մի կանգնած կին, բաց մազերը մի  
հիւսով կախուած մէջքի վրայ, օղակներն ականջներում, եր-  
կայն շապիկը կոճկած, որա վրացից կարճ արխալուզը, ոտերին  
լափչիններ, բազուկներին հագցրած է ապարանջան, ձախ ձեռ-  
քը ծալած կը ծրի վերայ, իսկ աջը մեկնած դէպի արծաթեայ  
սափարը։

Սրանից յետոյ գալիո է Գիւլաքը մահարձանը, որ իըրեւ-  
կանգուն խաչքար՝ բարձրութեամբ  $2\frac{1}{2}$  արշին, լայնութեամբ  
մի արշին, կը ում է հետեւեալ արձանագրութիւնը։ «Սուրբ  
Խաչո Գիւլաքին և իւր կողակցին, կանգնեցի Սուրբ խաչո և ո-  
քաղաքացին առաջարին»։ Թվին հայոց ՌԵ (1120—1671)։  
Սոյն քարի արեւելեան ճակատում «Ծնորհօք ամենազօրին Առ-  
տուծոյ ես Նազլուխանս և որդիքո իմ մնլիք Դօնմազ և պարոն  
Վորիմազ որդիք պարոն Հախնազարին որդոյ պարոն Խփակին  
կանգնեաց ի սուրբ խաչո յիշատակ որդուց իմոց Տէր Սէրա-  
պիոնին»։ Գիւլաքի անունից ծագում է Գիւլաքի հանգը ու-  
տարածն, Գիւլաքի գոմեր, Գիւլաքի ըինայ և այլն։

Բաղայի բարգաւաճումն արտայայտուած էր նաև նրա  
շարէշար՝ խնամքով կանգնեցրած միայարկ և երկյարկունի տնե-  
րեց։ Բաղայի աների մեծ մասը ուուս գաղթականների տների  
նման, ծածկուած էր ծզօտով կամ խոտով, ուստի և գիւրա-  
վառ նիւթ էին հրդեհուելու և այրուելու։ Կային և այլ շինու-  
թիւններ, այն է մարադներ, գոմեր, շտեմարաններ, խանութ-  
ներ, մտռաններ և այլն, որոնք յարձակման երեկոյին զոհուե-  
ցին հրդեհին։

Ըստ պահանջման կառավարութեան, 1905 թուի մայիսին  
Քաղայի հասարակութիւնը կազմել էր բնակիչների նորագոյն  
ամենաճիշտ ցուցակ, որից երեսում է, որ յիշեալ թուին Բաղա-  
յում եղել է 300 ծուխ, 1388 հոդի աբական և 1225 իգական։

իսկ նորաձնունդ մինչև նոյն թուի դեկտեմբերի վերջը 100 հոգի ընդամենը 2713 երկուու ընակից, որոնց մի մասը մշտական ընակութիւն էր հաստատել շրջակայ բինաներում:

Այդ բազմաթիւ ժողովու բար, շրջապատուած լինելով ևս առաւել բազմաթիւ թուրք ազգաբնակութեամբ, սակայն՝ չնորհիւ իւր տոկունութեան, աշխատասիրութեան և հողի ու կրիմայի բարեբեր յատկութեան, կարողացել էր հասնել նաև խանձելի տնտեսական բարձրութեան: Բագայի նիւթական հարստութեան շափը մօտաւորապէս որոշելու համար ապացոյց կարելի է բերել հետեւեալ հաշիւը:

Բագայի աւերումից յետոյ, Կովկասի բարձր իշխանութեան հրամանով, տեղական հաշտարար միջնորդ Խվան Պետրովը 1906 թուի Ապրիլի 10 ից մինչև 25, բազմաթիւ հայ և թուրք ընակիչների ներկայութեամբ և մասնակցութեամբ կազմեց Բագայի կրած վնասների, նոյնպէս և առանձնական ծուխների կրած կարստից առցարկը, գնահատելով իւրաքանչիւր կորուստ կամ վնաս աներե, շինութիւնների, մուրհակների, այգիների, անառունների և այլոց, վնասի ընդհանուր գումարը, Պետրովի հաշուսվ, եղել է երկու միլլիոն երկու հազար երեք հարյուր (2,002,300) ռուբլի:

Այսպիսի գումար կարող է միայն կէուը համարուել այն ահագին վնասների, որոնց ենթարկուեց թշոււառ Բագան իւր աւերման օրերում: Տասնեակ տարիներ իւր արիւն քրտինքով ձեռք բերած տնտեսութիւնը կորաւ յաւիտեան մի գիշեր, մի քանի ժամի մէջ:

Գիւղատանտեսութեան ճիւղերից զարգացած էին 1, Գիւն ե գուծութիւնը, կային այնաւեղ աւելի քան 200 այդի, որից ստացւում էր բաց կարմիր դինի նշանաւոր քանակութեամբ՝ որև ոպաւում էր վեղրօն մինչև 1 ռ. 50 կոպ. ինչպէս գիւղում, նոյնպէս և շրջակայ հայ և ռուս գիւղերում: 2, 0 զեհանութիւնը որ քաշում էին թթից մեծ քանակութեամբ, 3, ներապատճութիւնը, որով զբաղւում է մօտ 100 տուն, և այնքան զարգացած է, որ գոհացնում է իւրանց պէտքերը, սակայն մշակուում է ամենահին, տարբարական ձեռվ, մեքենաների լիովին բացակայութեամբ, 4, Հողագործութիւնը, որ տալիս էր ցորեն, գարե, կորեկ և կտաւհատ, որից հայերը ձեթ են հանում իրանց համար Սլաւեանկայ ռուս գիւղի մեքենաներով, 5, Մեղուաբռուծութիւնը, որով քչերն էին պարապում և ընդամենը մօտ 50 տուն և իւրաքանչիւր հազիւ 10—30 դիմութակ միայն էին պահում:

Ամենածաղկածն անառնապահութիւնն է, որով

հետեւ եւրաբանչիւր տուն ունէր մինչև 100 դլուխ խոշոր անառուններ (կով, գոմեց, եղ, և այլն) իսկ ոչխար 500—1500 դլուխ. գեւզը շրջապատող բազմաթիւ բինաներն ապացոյց են անասնաբուծութեան զարգացման:

Արհեստագիտութիւնից շատ հնուց ծագկած է ոստայշն անկութիւնը, որսվ միահաւասար զբաղուած էին կանայք և աղամարդիկ և գործում էին կտաւ, ջեջիմ, թամբի ծածկոց, շապկացու, մետաքսէ ծածկոց ելն: Այժմ գործում են միայն ըսդէ շալ: Դերձակներն ունեին գիւղում մօտ 7—8 խանութ, Դարբինները 6—7 խանութ, կօշկակարը ներ 10—12 խանութ, ճոկերիչներ 3—4 խանութ, հիւռներ 10—12 հոգի, որմնագիւրներ 7—8 հոգի, քարահանքում քարկանդներ 6—7 հոգի, ջրազացաքար կտրողներ Դարսաթաջանքանքում մի քանի հոգի, բրուտներ ու զուռնացիներ մի քանի հոգի, սաղանգար բանաստեղծարութիւններ 8 ոհնանիսեան—0 ջաղ օղլի մականուանեալ, և ոյլ արհեստներ և արհեստաց էաներ:

Գիւղում կային նաև առեւտրական խանութներ, մահրավաճառ հ խանութ, ճոթեղինի 8 խանութ, մսավաճառ-կապալառու մի խանութ և այլն:

Խնտելլիգենտ գառակարգից կան երեք քահանայ, արհեստաւորաց գպրոցաւարտ և ուսուցչական գոլրոցաւարտ մի քանի անձն, նոյնպէս և ոչ սակաւ գրագետներ, ուսուեալ առ ստո քահանայից, ըստ որում գիւղն երբէք չէ ունեցել ծխական գպրոց, այլ ունէր միայն միդասեան կառավարչական գպրոց հասարակութեան հաշւով: Ստացւում էր մի օրինակ «Նոր Դար» և որա գագարելուց յետոյ«Մշակ»:

Այս էր ահա Բագայի անտեսական և կուլտուրական գրութիւնն երբ թուրք—հայկական ընդհարումը վերջ դրեց նրա բարգաւաճմանը, և Բագան գժուար թէ 50—70 տարի այս օրից յետոյ կարողանայ հասնել այն բարգաւաճման առավեճանին, որի վերայ կանդնուծ էր նա իւր տւերման բոլորին:

Այս կարճառօտ տեղեկութիւններն անհրաժեշտ էին, որպէս զի ընթերցողը կարողանայ գաղափար կազմել թէ ի՞նչ էր Բագան այն չարաբաստիկ ըուլէին՝ երբ նա ենթարկուեց անդոք ճակատագրի անգառնալի որոշման:

(Եարունակելի)

Քաջիրաւնի

